Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
սեպտեմբերի 28-ի N 1199 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՀՈՒՄՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 20.1-ին հոդվածի համաձայն ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային հանձնաժողովի գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Մրցույթն անցկացնում է Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ օրենսգրքի և սույն կարգի համաձայն:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Հանձնաժողովը՝

1) նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր թղթակցային և արձանագրային բաժնի պետից հայտերի բացման նիստից տասը որպե առաջ ստանում է մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց փաստաթղթերը.

2) քննության է առնում փաստաթղթերի ճշտությունը, ամբողջականությունը և կայացնում է որոշում դիմած անձանց մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու մասին.

3) անցկացնում է մրցույթի մասնակիցների (այսուհետ՝ մասնակիցներ) ներկայացրած հայտերի ուսումնասիրություն.

4) իրականացնում է քննարկումներ առանձին հարցերի շուրջ՝ ըստ հայտերի գրանցման հերթականության.

5) որոշում է մրցույթի արդյունքների ամփոփման օրը, որը չի կարող գերազանցել մեկ շաբաթը՝ հայտերի բացման օրվանից:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

6. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայներով:

7. Հանձնաժողովի անդամի կողմից մրցույթի անցկացման կարգը խախտելու դեպքում հանձնաժողովը տվյալ հարցի վերաբերյալ ընդունում է որոշում, որի պատճենը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին, որն իր հրամանով կարող է հանձնաժողովի անդամին հանել տվյալ հանձնաժողովի կազմից:

8. Ամփոփման օրը հանձնաժողովը կազմում է արձանագրություն և ներկայացնում լիազոր մարմնի ղեկավարի հաստատմանը, որից հետո պաշտոնապես հրապարակում է մրցույթի արդյունքները:

9. Հանձնաժողովի անդամները ներկայացված առաջարկությունների հստակեցման նպատակով իրավունք ունեն դիմելու մրցույթի մասնակիցներին կամ նրանց լիազոր ներկայացուցչին՝ առաջարկությունների վերաբերյալ պարզաբանում ստանալու համար:

10. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կարող է հայտատուից պահանջել հայտին կից ներկայացված փաստաթղթերից ցանկացածի ընօրինակը:

11. Հայտին կից ներկայացված փաստաթղթերում վրիպակների կամ բացթողումների հայտնաբերման դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, մինչև տվյալ մրցույթի արդյունքների ամփոփման օրը հայտատուին տրամադրվում է ժամանակ՝ նշված վրիպակները կամ թերությունները մինչև մրցույթի անցկացման օրը վերացնելու համար:

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստեր և նախագահում դրանք.

2) հանձնաժողովի անունից ստորագրում է հանձնաժողովի որոշումները, նիստերի արձանագրությունները, մրցույթի արդյունքների մասին արձանագրությունները:

13. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նախագահի պարտականությունները կատարում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ